ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/21-6

ք. Գյումրի «16» ՄԱՅԻՍ 2024թ.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս Արմեն Իսահակյանի, որը գործում է «Գյումրու բժկական կենտրոն » ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ն,ի դեմս տնօրեն՝ Մ. Մացակյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է *3 066 506.00* /երեք միլիոն վաթսունվեց հազար հինգ հարյուր վեց / ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից

կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը

սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի

սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	<<ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3	Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
ՀՎՀՀ 05539526	Այ Դի Բանկ
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ, Գյումրիի մ/ճ	Հ/Հ 11815019046000
Հ/Հ 15100199522250100	ՀՎՀՀ 02606482
Տնօրեն----------	Հեռ. 060 61 52 58
/ստորագրություն/	էլ. հասցե՝ import@alfapharm.am
Կ.Տ	Տնօրեն Մ. Մացակյան

	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 1
«16» մայիս 2024թ. կնքված
<<ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/21-6>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
4	33621420	Ատորվաստատին 40մգ	Ատորիս ԿԴԿԱ դ.դ.	ատորվաստատին (ատորվաստատին կալցիում) դեղահատեր թաղանթապատ 40մգ; (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում, (90/9x10/) բլիստերում	հատ	52.3	313800	6000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	6000	Մատակարարումն իրականացվում է կողմերի միջև պայմանագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրից/եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ: Մատակարարումն ըստ պահանջի:
6	33671114	Ամինոֆիլին 2,4%-5 մլ	Էուֆիլին "Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ	ամինոֆիլին (էուֆիլին) լուծույթ ն/ե ներարկման 24մգ/մլ; (10) ամպուլներ 5մլ պիտակ բանդերոլ, (10/2x5/) ամպուլներ 5մլ	հատ	36.86	368600	10000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	10000	
7	33621390	Ամիոդարոն 150մգ 3մլ	Ամիոդարոն «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 50մգ/մլ; (10) ամպուլներ 3մլ պիտակ բանդերոլ, (10) ամպուլներ 3մլ դիվիդելլա, (10) ամպուլներ 3մլ կամա	հատ	200.34	240408	1200	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1200	
10	33621740	Ամլոդիպին 10մգ	Ամլոդիպին «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	*ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) դեղահատեր 10մգ; (30/3x10/) բլիստերում*	հատ	6.77	40620	6000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	6000	
15	33691189	Բետահիստին 24մգ	Բետասերկ Աբբոտտ Հելթքեյր Պրոդուկտս Բ.Վ.	*բետահիստին (բետահիստինի դիհիդրոքլորիդ) դեղահատեր 24մգ; (20/1x20/) բլիստերում, (60/3x20/) բլիստերում*	հատ	134.82	323568	2400	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	2400	
19	33661153	Դեքսամեթազոն ակնակաթիլ 10մլ	Դեքսամեթազոն Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ.	*դեքսամեթազոն ակնակաթիլներ, դեղակախույթ 1մգ/մլ; 10մլ պլաստիկե սրվակ-կաթոցիկ*	հատ	579.3	23172	40	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	40	
26	33691192	Լիդոկային հիդրոքլորիդ, էպինեֆրին 20մլ	Լիդոկային-Լիկվո էպինեֆրինով Լիկվոր ՓԲԸ	լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ), էպինեֆրին լուծույթ ներարկման 20մգ/մլ+0,01մգ/մլ; (1) ապակե սրվակ 20մլ, (10) ապակե սրվակներ 20մլ	հատ	826.8	124020	150	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	150	

33	33691176	Կլեմաստին 1մլ	Կլեմաստին «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	կլեմաստին (կլեմաստինի ֆումարատ) լուծույթ ներարկման 1մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ պիտակ բանդերով, (10) ամպուլներ 2մլ դիվիդելլա, (10) ամպուլներ 2մլ կամա	հատ	147.99	59196	400	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	400
34	33621140	Կլոպիդոգրել 75մգ	Կլոպիդոլ Ա ԼԱԲ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ	կլոպիդոգրել (կլոպիդոգրելի բիսուլֆատ) դեղահատեր թաղանթապատ 75մգ; (20/2x10/) բլիստերում	հատ	41.5	498000	12000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	12000
43	33661125	Մետամիզոլ. նատրիումական մոնոհիդրատ.պիտոֆենոնի հիդրոքլորիդ. ֆենպիվերինիումի բրոմիդ 2մլ	Սպազմալգոն 500մգ/2մգ/0,02մգ/մլ ներարկման լուծույթ Սոֆարմա ԲԸ	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ մ/մ ներարկման 500մգ/մլ+2մգ/մլ+0,02մգ/մլ; (10/1x10/) ամպուլներ 2մլ բլիստերում	հատ	226.4	45280	200	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	200
48	33641210	Միֆեպրիստոն դիտ 200մգ	Միրոպրիստոն Օբնինսկի Քիմիադեղագործական Ընկերություն ՓԲԸ	միֆեպրիստոն դեղահատեր 200մգ; (3/1x3/) բլիստերում	հատ	2484.6	149076	60	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	60
56	33661147	Նեոստիգմին 0,05%- 1մլ	Պրոզերին-Դարնիցա Դարնիցա» դեղագործական ֆիրմա ՄԲԸ	նեոստիգմին (նեոստիգմինի մեթիլսուլֆատ) լուծույթ ներարկման 0,5մգ/մլ; (10/2x5/) ամպուլներ 1մլ բլիստերում	հատ	44	44000	1000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1000
61	33621480	Պերինդոպրիլ դիտ 10մգ	Պրեստարիում 10մգ Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի	պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին) դեղահատեր թաղանթապատ 10մգ; (30) պլաստիկե տարայում	հատ	86.72	130080	1500	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	1500
62	33691186	Պիրացետամի 20%-5մլ	Պիրացետամ "Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ	պիրացետամ լուծույթ մ/մ և ն/ե ներարկման 200մգ/մլ; (10) ամպուլներ 5մլ ԿԱՄԱ, (10) ամպուլներ 5մլ պիտակ բանդերով, (10) ամպուլներ 5մլ դիվիդելլա	հատ	34.19	205140	6000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	6000
69	33621620	Սպիրոնոլակտոն 25մգ	Սպիրոնոլակտոն «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	սպիրոնոլակտոն դեղահատեր 25մգ; (30/3x10/) բլիստերում	հատ	14.11	141100	10000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	10000
71	33661154	Տետրակային 1% ակնակաթիլ 10մլ	Տետրակային Լիկվոր ՓԲԸ	տետրակային (տետրակայինի հիդրոքլորիդ) ակնակաթիլներ 10մգ/մլ; (1) պլաստիկե սրվակ-կաթոցիկ 10մլ, (10) պլաստիկե սրվակ-կաթոցիկ 10մլ	հատ	267.1	16026	60	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/0	60
72	33631380	Տոլպերիզոն հ/ք 150մգ	Տոլպերիզոն «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	տոլպերիզոն (տոլպերիզոն հիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 150մգ; (30/3x10/) բլիստերում	հատ	23.15	27780	1200	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/1	1200
74	33691500	Տրանեքսամաթթու 500մգ	Տրանեքսամ Օբնինսկի Քիմիադեղագործական Ընկերություն ՓԲԸ	տրանեքսամաթթու դեղահատեր թաղանթապատ 500մգ; (10/1x10/) բլիստերում	հատ	184.4	110640	600	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/2	600

82	33631200	Քլորամֆենիկոլ.մեթիլուրացիլ քսուկ 40գ	Մեկոլ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	քլորամֆենիկոլ. մեթիլուրացիլ քսուք արտաքին կիրառման 7,5մգ/գ+40մգ/գ; 40գ ալյումինե պարկուճ	հատ	235	56400	240	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	240	
84	33611120	Ֆամոտիդին դիտ 20մգ	Ֆամոտիդին «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	ֆամոտիդին դեղահատեր թաղանթապատ 20մգ; (20/2x10/) բլիստերում	հատ	18.7	149600	8000	ք.Գյումրի Գ.Նժդեհի 3/3	8000	

ԳՆՈՐԴ

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3

ՀՎՀՀ 05539526

Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ, Գյումրիի մ/ճ

Հ/Հ 1510019952250100

Տնօրեն----------

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ>> ՓԲԸ

Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68

Այ Դի Բանկ

Հ/Հ 11815019046000

ՀՎՀՀ 02606482

Հեռ. 060 61 52 58

էլ. հասցե՝ import@alfapharm.am

Տնօրեն Ս. Սուքիասյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«16» մայիս 2024թ. կնքված
<<ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/21-6>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	33621420	Ատորվաստատին 40մգ	62760	94140	125520	188280	235350	282420	313800	313800
6	33671114	Ամինոֆիլին 2,4%-5 մլ	73720	110580	147440	221160	276450	331740	368600	368600
7	33621390	Ամիոդարոն 150մգ 3մլ	48081.6	72122.4	96163.2	144244.8	180306	216367.2	240408	240408
10	33621740	Ամլոդիպին 10մգ	8124	12186	16248	24372	30465	36558	40620	40620
15	33691189	Բետահիստին 24մգ	64713.6	97070.4	129427.2	194140.8	242676	291211.2	323568	323568
19	33661153	Դեքսամեթազոն ակնակաթիլ 10մլ	4634.4	6951.6	9268.8	13903.2	17379	20854.8	23172	23172
26	33691192	Լիդոկային հիդրոքլորիդ, էպինեֆրին 20մլ	24804	37206	49608	74412	93015	111618	124020	124020
33	33691176	Կլեմաստին 1մլ	11839.2	17758.8	23678.4	35517.6	44397	53276.4	59196	59196
34	33621140	Կլոպիդոգրել 75մգ	99600	149400	199200	298800	373500	448200	498000	498000
43	33661125	Մետամիզոլ, նատրիումական մոնոհիդրատ,պիտոֆենոնի հիդրոքլորիդ, ֆենպիվերինիումի բրոմիդ 2մլ	9056	13584	18112	27168	33960	40752	45280	45280
48	33641210	Միֆեպրիստոն դետ 200մգ	29815.2	44722.8	59630.4	89445.6	111807	134168.4	149076	149076
56	33661147	Նեոստիգմին 0,05%- 1մլ	8800	13200	17600	26400	33000	39600	44000	44000
61	33621480	Պերինդոպրիլ դետ 10մգ	26016	39024	52032	78048	97560	117072	130080	130080
62	33691186	Պիրացետամի 20%-5մլ	41028	61542	82056	123084	153855	184626	205140	205140
69	33621620	Սպիրոնոլակտոն 25մգ	28220	42330	56440	84660	105825	126990	141100	141100

71	33661154	Տետրակային 1% ակնակաթիլ 10մլ	3205.2	4807.8	6410.4	9615.6	12019.5	14423.4	16026	16026
72	33631380	Տոլպերիզոն հ/ք 150մգ	5556	8334	11112	16668	20835	25002	27780	27780
74	33691500	Տրանեքսամաթթու 500մգ	22128	33192	44256	66384	82980	99576	110640	110640
82	33631200	Քլորամֆենիկոլ,մեթիլուրացիլ քսուկ 40գ	11280	16920	22560	33840	42300	50760	56400	56400
84	33611120	Ֆամոտիդին դիտ 20մգ	29920	44880	59840	89760	112200	134640	149600	149600
										3066506

ԳՆՈՐԴ

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3

ՀՎՀՀ 05539526

Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ, Գյումրիի մ/ճ

Հ/Հ 1510019952250100

Տնօրեն----------

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ>> ՓԲԸ

Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68

Այ Դի Բանկ

Հ/Հ 11815019046000

ՀՎՀՀ 02606482

Հեռ. 060 61 52 58

Էլ. հասցե՝ import@alfapharm.am

Տնօրեն Ս. Մնացականյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն